

ՄԵԼԿ

Տարեկան դինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՌԻԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շուշու: Ներքին
լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ:—
ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նա-
մակ Թիֆլիսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Փետրվարի 7-ին

Մի տարի սրանից առաջ տեղացին ինտելիգեն-
ցիան բացեց մի հիմնարկութիւն, որին տուեց
քաղաքային կլուբի անունը, որը մինչև այժմ
պահում է իր գոյութիւնը: Դա միակ տեղն է,
որ ինտելիգենցիայի ներկայացուցիչներն անց-
նում են իրանց ժամերը: Ինչ է ներկայացնում
կլուբը: Դա մի տուն է, որի մի դահլիճում դրած
են մի քանի ակնոցներ և կանաչ սեղաններ,—
անա ձեռք մեր կլուբը: Արխանգելսկային ամեն
գիշեր այստեղ խիստ պարագլած է լինում, բայց
ոչ մի ուրիշ գործով, այլ բացառապէս թղթախա-
ղով ուրիշ մի նպատակ, ուրիշ մի դադարա-
թանօթ չէ կլուբ յաճախողներին: Նրանց ամբողջ
միտքը, գործունէութիւնը կենտրոնացած է թղթ-
թախաղի մէջ: Իսկապէս մենք ոչ թէ կլուբ, այլ
թղթախաղի տուն ունենք, ուր ամեն կարգի
պատկանող մարդիկ խաղում են, շատ զեպքերում
աղմուկներ ու սկանդալներ են պատահում: Շու-
շիի հասարակութիւնը դեռ անգնան տղէտ է, խա-
ւար է, որ մինչև անգամ հասկացողութիւն չունի
մի օրինաւոր կլուբի մասին: Շուշիի ինտելիգեն-
ցիան նայում է կլուբին, ինչպէս մի հիմնարկու-
թեան, որտեղ կարելի է միայն խաղալ, գործ ա-
ծել անբարոյական միջոցներ փող տանելու հա-
մար, բայց հասկանալի է որ այդպիսի հիմնար-
կութիւնը կլուբ անուանելը մեղք է, եթէ ընդու-

նենք թէ կլուբն այն բանն է, որ լուսաւորեալ
աշխարհում ունի իր յայտնի նշանակութիւնը, ու-
նի իր յատուկ ազդեցութիւնը հասարակական
գործերի վրա: Շուշիցի աղան կարելի է
շատ կը դարձանար, երբ կլուբում փոխանակ կա-
նաչ սեղաններէ հանդիպել մի լուրջ շրջանի, որ
զբաղված լինէր հասարակութեան վերաբերեալ
հարցերով: Նա կլուբում և դրսում միշտ խօսում
է թղթերի մասին... Միթէ չարժէր որ մեր աղա-
ները զէպի թղթախաղը ունեցած սիրոյ կէսն ըն-
ծայէին հասարակական գործերին, այն հասարա-
կութեան, որին առաջնորդ են համարվում իրանք:

Մինչդեռ աղաները զբաղված են այսպիսի ի-
րանց կարծիքով, անմեղ զուարճութիւններով,
մեր քաղաքային գործերն ընկած գրութեան մէջ
են գտնվում: Մեր փողոցները շարունակում են
մնալ խաւար, ծուռ ու մուռ, ցիւրտ ու հոտած:
Հոգեւոր ուսումնարանը գտնվում է խալիսուլ հիման
վրա, հասարակութեան կողմէնքերն օրից օր չողիս-
նում են:—Բէալապիսի ուսումնարանի գոյութեան
հարցը դեռ վերջնականապէս վճարված չէ, թէ
ամբողջ երկու տարի է, որ այդ հարցը դադարե-
ցնում է շատ ուղեղներ: Շուշիի պէս մի հարուստ
քաղաք չէ կարողանում տարեկան 7000 բուրդի
վճարել ուսումնարանին և այսօր հայերը չեն ու-
զում ունենալ բէալապիսի ուսումնարան, իսկ էգուց
թուրքերն են պատգամաւորութիւն ուղարկում
գաւառապետի մօտ խնդրելով փակել տալ ուսում-
նարանը (վերջին անգամ պատահել է այս քանի
օրերս): Մի աղա սովորեցնում է ժողովրդին ո-
չինչ չը տալ ուսումնարանին, իսկ միւսը յորդո-
ւում է տալ. մի անվերջնալի խաօս են ներկա-
յացնում քաղաքային գործերը: Ի դուր չէ մի պա-
րոն անուանել է չուշիցիներին «փչացած երեխա-
ներ»: Դա շատ իրաւացի է: Այդ մօտ հասարա-
կական շահեր չը կան, ամեն մի անհատ ապ-
րում է իրան համար, իսկ գործունեայ և անձնա-

նուէր գործիչներ լապտերով պէտք է որոնել: Գը-
նած է հասարակութիւնը, քնած է և ինտելիգեն-
ցիան: Ո՞վ պէտք է սթափեցնէ այս քուշը: Ի հար-
կէ մամուլը, բայց ոչ քնացնող, ամեն մի ան-
տարբեր գործունէութիւն գոյություն մամուլը, այլ
անհետապաշտ, անկեղծ մամուլը, որ միշտ պատ-
րաստ է ամեն գովելի բան գովել, իսկ վատը
անխնայ կերպով պախարակել, մտարկել: Անու-
րանալի է որ այդպիսի յատկութիւններ ունեցող
օրգանը «Մշակն» է, որ տեղական ժողովրդի աչ-
քում անապին վարկ ունի: Ամեն մի գրուելի ան-
տարբերութիւն, կաշառակերութիւն երևան հանե-
լը, ամեն մի զեղծում դրսուելը, ծուրութիւնից, քը-
նից, անտարբերութիւնից զարթնացնելը—ժողո-
վուրդը սպասում է միայն «Մշակից»: Ուրիշ մէկին
նա համարեա չէ ճանաչում: Եթէ այսօր մի լրագր-
ի թղթակից հայհոյում է «Մշակին» կամենալով
ցոյց տալ թէ իր պաշտպանած լրագիրը աւելի
ժողովրդական է,—դա դեռ չէ կազմում իրակա-
նութիւն: Ճշմարտութիւնը կարելի է իմանալ նը-
րանից, թէ ինչ է մտածում ժողովրդը, ստուար
մեծամասնութիւնը «Մշակ»-ի կամ միւս լրագիր-
ների մասին, թէ մինչև որ աստիճան է նա հա-
մակրում նրանց, այդ ժամանակը միայն կարելի է
ճշմարտութիւնը պարզ տեսնել: Ժողովուրդը սի-
րում է «Մշակ» լրագիրը:

Ա. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մեղու Հայաստանի» լրագիրը և «Արձագանք»
շարժաթղթերը, որոնք անդադար յարձակվում են
«Մշակի» վրա թէ մենք կաթողիկոսի մասը հա-
ղորդելով չը գրեցինք «Մշակի» ամբողջ առաջին
երեսը սև չըջանալիքով մէջ, այլ միայն նոյն իսկ
լուրի չորս կողմը սև չըջանալիքով գրեցինք,—ին-
չի նոյն «Մեղուն» և «Արձագանքը» նոյն հարցը

չեն առաջարկում: Կ. Պօլսի հայ-լուսաւորչական
լրագիրներին, որոնք թէ «Մասիս», թէ «Մամու-
լը» թէ «Լոյսը» և թէ ուրիշները հրատարակե-
ցին ամենայն հայոց կաթողիկոսի մասը ոչ թէ
միայն առանց ընդհանուր սև չըջանալի գնելու,
բայց և նոյն իսկ լուրի չորս կողմը (ինչպէս «Մա-
սիսն» արաւ իր դիտեմքերի 7-ի համարում) սև
չըջանալ չը գրեցին, այլ լուրի վերեւից մի սև
գիծ գրեցին և լուրի տակն էլ մի սև գիծ, ուրիշ
ոչինչ:

Դոկտոր Անդրէաս Արծրունի դրում է մեզ Բեր-
լինից հետեւեալ: «Նորերումս մի շատ հետաքր-
քիր և հայերին շատ համակրական փոքր գրքույկ
է հրատարակվել Ֆրանսերէն լեզուով «L'Armenie
et les armeniens» վերնագրով: Հեղինակը մի ինձ
մինչև այժմ անծանօթ պարոն է Գատտէյրիաս,
I. A. Gatteyras ազգանունով, որ, ինչպէս երե-
ւում է, հայադէտ է և Գիւլօրիէի աշակերտ է:
Երևում է, նոյնպէս, որ նա Ֆրանսիայի մէջ աչ-
քում միակ մարդ է, որ հայերէնը իր համար մաս-
նագիտութեան առարկայ է ընտրել: Կախատեմ
կարճ զեկուցումն կազմել «Մշակի» համար այդ
գրքույկի մասին, որ ընդամենը 181 երեսից է
բաղկացած in 18^o. Նոյնպէս կուզարկեմ գրքույկը
խմբագրութեանդ: Մի միտք որ հեղինակը յայտնում
է, ինձ զարմանալի է թւում, բայց ես ի հարկէ
դրա մասին ոչինչ սեփական գաղաղութիւն կամ
հայեացք չեմ կարող ունենալ, որովհետեւ նա
կապ ունի լեզուագիտական և պատմական իրո-
ղութիւնների հետ, այն է որ Հայաստանի սկզ-
բնական ազգաբնակչութիւնը եղել է կամ վրա-
ցիներ, կամ նրանց ցեղին ազգակից մի անյայտ
ժողովուրդ, իսկ միայն աւելի ուշ երկիրը հայերի
ձեռքն ընկնելով, հայերը մասամբ ընդունեցին
սկզբնական ժողովրդից շատ բաւեր, որոնք նման
են վրաց լեզուին և պահպանել են հայերէնի

տասխանաց, դըյան է թ, դարձեալ բան մը չը
գրեցիր, ըստ:

—«Գրեցի, գրեցի», ըսի, մասնաւորապէս կաթո-
ղիկոսի խնդիրը երկար գրեցի,—Այլապէս ապ-
շած, «որ խնդիր» հարցուց:

—Սա կրօնական պատմամտութեան խնդի-
րը և հոռիմէական հայ տղայներ ընդունելու գոր-
ծը, պատասխանեցի, և պատմեցի դրան:

—Խեղճ Այլապէս, ինչ վիճակի մէջ մնաց:
Կարծես ամբողջ Ղալաթիա դիտուն փաւ: Երկու
ձեռքերէս բռնած կաղաչել «արե, արե, այդ կը-
տորը» կըսէր:—

—Աղբւր, դուն չըմբ, կըսէի:

—Քաղաքականութիւնը այնպէս կը պահանջէր
այնպէս ըսի, պատասխանեց: Եթէ Լեւոնտին ի-
մանան որ հոռիմէական տղայներ կան, տղայները
ողջ ողջ կը թաղեն, Աստուածդ կը սիրես, մեղ-
քըքը տղայները, կըսէր:

Պատասխանեցի թէ, այդքան աղաչելու բան մը
չը կայ, տղոց գէշութեան պատճառ. չեմ ըլլար:
Եթէ ուրիշին աղէկութիւն մը չեմ ընել, գէթ գէ-
շութիւն ալ չընեմ, ըսի: Գացի անմիջապէս այդ
կտորները վերցնի, ուրիշ գրեցի: Սակայն այս
գէպքէն հասկացայ թէ պ. Այլապէսն քաղաքա-
կանութեամբ դործ տեսնել ուղղ մարդ է: Յաջո-
ղի յաջողի, չը յաջողի չը յաջողի: Երկու երեք
սուտ ալ գործելու խիղճ չընել: Հետեւաբար այժմ
ալ պ. Այլապէսն ինչ որ կըսէ չափաւոր կերպով
հաւատք կընծայեմ:

Սակայն միթէ ասիկայ պատճառ մ'է որ պ.
Այլապէսն հետ անիրաւութեամբ վարուին: Պ.
Այլապէսն յանցաւոր է, կըսեն:—Լաւ, բայց ար-
դարութիւնը որով իմաստարկն պիտի ձգէ ուշ
վրդի մէջ, քիչ շատ քաղաքակիրթ, ուշադիր են
որ չըլլայ թէ ամբաստանեալ մը անիրաւ կեր-
պով դատեն: Ամբաստանեալին կընծայեն ամեն
միջոց ինքզինքն արդարացնելու: Արդ հոս մեծ
ջանք մը կայ որ չըլլայ թէ պ. Այլապէսն առկթ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՍԻՅ

Կ. Պօլսի, 31 յունվարի

Տիֆլիսին մի յոյժ յարգելի անձ կը գրէ մեր բա-
նկաւանց ունանց թէ «Ինչ խելքով նպատաւոր
կէտեր երեցան «Մշակ»-ի Պօլսոյ թղթակցու-
թեանց մէջ Արք. Այլապէսնի ձեռնարկի մասին»:
—Մենք ալ կը հարցնենք «Ինչու աննպատ քը-
րէնք»։—Արք. Այլապէսն խումբ մը աշակերտ-
ներ կը տանէր Էջմիածնայ ձեռնարանին մէջ կըր-
թել տալու համար, ինչ գէշութիւն այս գործին
մէջ որ մենք հակառակէինք: Բայց թէ Այլա-
պէսն տանելու արտօնութիւն ունէր թէ ոչ, այդ
ինձ ինչ փոյթ:—Միթէ ես Էջմիածնայ գոր-
ծակատարն եմ, Ռուսիոյ զեպանն եմ, ծնողաց
երեցիօրեանն եմ:—Պ. Արք. Այլապէսն ձամբան
տղայքը աղէկ չէ նայած եղեր, ինչ ընեմ թող
ծնողքներն նայէին թէ իրենց դատակները վատա-
հիւսի անձի կը յանձնեն թէ ոչ:—Մենք գրեցինք
պ. Այլապէսնի ձեռնարկի օգտանկերուն վրայ, և
այդ անձին Պօլսոյ մէջ ունեցած դիրքին վրայ:
Կայ սխալ մը, այդ թող ըսեն:

Պէտք է խոստովանել որ այս գործը խղճի մը-
տօք դատել ուղղը բաւական դժուարութեան կը
անդիպի: Այլապէսնի հակառակորդը, զանազան
անձնական հաշիւներ, զանազան էնթրիկներ, զա-
նազան խաղախաղութիւններ, ցած վրէժխնդրու-
թիւններ ունեն լուծելու, ինչպէս հաւատաս ա-
նոնց խօսքերուն:—Իսկ պ. Այլապէսնի խօսքե-
րուն ալ չեմ կրնար հաւատ ընծայել և կուրօրէն
հաւատալ: Մի մարդ որ միանգամ կամաւ սուտ
կը խօսի, այլ ևս անոր խօսքին հաւատալը դը-
ժուար է: Եթէ փորձառութիւն մը կայ որ օգուտ
չունի մարդու, այդ ալ ստախօսներուն փորձա-
ռութիւնն է: Ի դուր սուտ խօսող մը դառն փոր-

ձեր ունենալով զղովմի կուգայ և միայն ճշմա-
րեալ կուգէ ըսել, ոչ որ կուգէ հաւատալ: Ան-
շուշտ Այլապէսն դայս ըմբռնեց, բայց ինչ օգուտ,
շատ ուշ:—Մենք Պ. Այլապէսնի հետ գրեթէ յա-
րաբերութիւն չունէինք առաջին անգամ Տիֆլիսի
գալէն առաջ, վերջերս գրեցին անկի ձեռնարանը:
Մի պարագայ սակայն խրատեց զմեզ որ գրույ՜
կենանք:—Պատմենք: Այդ պատմութիւնը կը ներ-
կայացնէ ամբողջ Արք. Այլապէսնը, ինչպէս որ է:
Պ. Այլապէսն տղոց հետ ձամբայ կըլէ մի
քանի օր առաջ հրապարակած էր Օրթոդոքս պ.
Սօսիւնի տունը: Երկու աշակերտ ալ Օրթոդոքս
պիտի տանէր, ծնողքներն կուգէին վերջին տե-
սութիւն մը ընելու:—Պ. Սօսիւն ալ լաւ չէր ճա-
նաչեր Այլապէսնը, ինչի ալ ըստ որ գիշերը ի-
րենց երթում, ժամանակ կանցնէին: Երանք դա-
ցինք. բաւական բազմութիւն կայ: Ամենն ալ ըն-
տիր ընտանիքներ: Աւելորդ է ըսել որ խօսակցու-
թեանց միծաղոյն մասը Տիֆլիսի, Էջմիածնայ, ձե-
մարանին վրայ էր: Իսկ այս խօսակցութեան ալ
մեծ մասը վեհ. Կաթողիկոսի և Մանկունի եպիս-
կոպոսին վրայ էր: Պ. Այլապէսն ամենին աւելի
անհաւատներն ալ դարձի կը բերէր Մանկունիի
համար: Սօսիւն մը, Ներսէս չնորհալին հաւատար
անձ մը:—Երբ կը հարցնէինք թէ ձեռնարանին մէջ
որչաւի պարագայ տեղ կայ: «Տակաւին հինգ հա-
րիւր տղու համար պարագայ տեղ կայ» կը պա-
տասխանէր:—Պ. Այլապէսն երկու հատ ալ հը-
ռովմէական հայ տղայներ միտին կը տանէր,
մին օրթոդոքսի, միւսն բերացի, երկուքին ծնողք-
ներն ալ հոն ներկայ էին, մանաւանդ միոյն հայ-
րը շատ նշանաւոր անձ է:—Եւ հարցուցի պ. Այ-
լապէսնին թէ «Ինչպէս կարելի է որ Էջմիածնայ
ձեռնարանի մէջ հոռիմէական հայ տղայներ ըն-
դունեն»։—Այս հարցման վրայ ծնողքներն ալ
արթնացան, և սկսան մտածել:—Երբեք չը պիտի
մոռնամ այս վարկերին պ. Այլապէսնի ձեռք:
Կամաց կամաց ոտքի ելաւ նստած անկիւնէն, ֆի-

մէջ, իսկ սկզբնական ընդիմ ժողովուրդը, ի հարկէ, կատարելապէս հայացաւ: Հնդկական իր այդ կարծիքը ոչինչով չէ ապացուցանում իր գրգռելի մէջ, որի նպատակն է մի ժողովրդական և ամեն ընթերցողի համար հայոց ազգութեան մի մասնակի պատմութիւն ներկայացնելու: Նորերումս հրատարակել է և մի այլ գիրք հայերի մասին, սա գերմաներէն լեզուով է և մասնագիտական, լեզուագիտական մի աշխատանք է, որի հեղինակը յայտնի գերմանացի հայագէտ Հիւսքմանն է (Hübshmann): Գրքի վերնագիրը սա է. «Die Umschreibung der iranischen Sprachen und der Armenischen»: Բայց այս գրքի մասին ոչ իմ ծանօթ լեզուագէտների կողմից մի կարծիք եմ բաց զիստ ևս, ոչ էլ ինքս տեսած եմ այդ գիրքը»:

Հնորհակալութեամբ ստացանք ալ, Գ. Ստեղծուկեանցից նրա հեղինակութիւնը «Քանդակ օջախ» կոմէդիա երեք արարածով: Տպւած է թիֆլիսում, Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1883 թին: Տխրը բա է, բայց թուովը, մեր կարծիքով, փոքր ինչ բարակ է: Թատրոնական պիեսան պէտք է աշխատել աւելի հաստ թղթի վրա տպել, որպէս զի գիրքը չուտ չը մաշվի, երբ գործ է ածվում բնակեցի: Գրքի վրին է 50 կոպէկ և ծախվում է «Կենտրոնական» և «Կովկասեան» գրաւաճառատնոցներում: Այժմ մեր թատրոնական հեղինակի հինգ գրածներէն չորսը արդէն հրատարակվել են, այն է. «Գիշերական սարը լոյս է» վոդևիլը, երեք կօմիդները, «Եստակ» (պոմպա), «Պէպօ» և վերջապէս «Քանդակ օջախ»: Մնում է այժմ հրատարակել միայն «Ելի մէկ դո՛» կօմիդիան և Գ. Ստեղծուկեանցի բոլոր գրածները հրատարակված կը լինեն:

«Մեղու Հայաստանի» լրագիրը և «Արծաղանք» չարախաղները, ուղենալով ստուեր գցել «Մշակ» վրա, ատուութիւն յարուցանել զէպի «Մշակը» տղետ ամբողջ մէջ, ցոյց տալ թէ «Մշակը» թշնամի է ամեն «աղաքին» հատատութիւններին, «հեղեղու», «կաթողիկոսութեան» և այլն, իրանց վերջին համարներում սովորութիւն են առել անդադար մեզ հարց տալու արդե՞ր թէ «Մշակը» ոչինչ է գրում կ'աթողիկոսն ապա ինչո՞ւ ինչո՞ւ վրա: Եւ այդ հարցերը նրանք անում են ամենապարզագոյն կերպով: Ահա ինչ է գրում, օրինակի համար «Մեղու» լրագիրը: «Այն ժամանակ»

մը ունենայ ինքզինքն արդարացիապէս երկու խօսք: Եւ: Ամեն լրագիր սուտ, իրաւ ինչ որ կը գտնէ Պ. Ալիաղանի զմ կը գրեն: Միայն «Թեքնիկա»-ն է որ չափաւոր կը չարծի: Բայց այս թերթերը որ անխիղճ կերպով կը չարծկին Ալիաղանի զմ, եթէ մարդկային ազնիւ զգացման փոքրիկ նշխար մը ունենային, իբրեւ ազնիւական խմբագիրներ իրենց էջերը պիտի բանային Ալիաղանի, որ եթէ պատասխան մը ունի՝ իտայ: Բայց ամենքը ահա գործով իրենց զուները փակած են Ալիաղանի երեսին: Ուսումնական խորհուրդը անպատասխան տեղեկագիր մը տուաւ Ալիաղանի նկատմամբ, հայերէն թերթերը անմիջապէս փութացին տպել զայն: Բայց Ալիաղանի այդ տեղեկագիրն պատասխանը գրած էր. ինչու չը համարձակեցան այդ պատասխանը տպել: Ես կարդացի այդ պատասխանը և շիտակ ըսելով մեծ մասամբ գոհացուցիչ գտաւ: Հասարակաց կարծիքը հակառակ է կրան Ալիաղանի: Բայց ինչ զիտնայ հասարակաց կարծիքը, երբ ամբաստանաւոր չէ կարող խօսելու: Այս բառական չէ, տեղեւոր երազական և թերթ թերթերուն ալ տուն կուտան որպէս զի գործը մեծցնեն:

Պ. Ալիաղանի զմ անխիղճ կը վարուին, ահա ապացոյց մ'ալ: Անցեալները երբ վաճառ վարդապետի զմ ամբաստանութիւն կար խորէն սրբազանի նկատմամբ, հարկ եղաւ որ քննիչ կարգված մասնաժողովին վկայութեան երկման Աղբ. ժողովի անդամներն ունան: Ինչ փոթորիկ ժողովին մէջ: Պէտք է Աղբ. ժողովը անդամ մը վկայութեան կոչելու համար նախապէս Աղբ. ժողովը հաճութիւնը առնել: Պատուոյ խնդիր է, պատուոյ խնդիր է: Եւ, բան մը չըսեմք: Հիմա պ. Ալիաղանի ալ, որ զէ աղէկ երեսփոխան մ'է, Աղբ. ժողովը անդամ մ'է, զանիցի ալ ուսումնական խորհուրդը անգն գտնուելու համար միթէ հարկաւոր չէր Աղբ. ժողովը հաճութիւնը առնել: Բայց կեանքի թէ ասանկ բաներ նայելու հարկ չը կայ:

Նակ երբ Արարատեան մայր-Աթուր թափուր է, երբ կաթողիկոսութեան նշանակութիւնը հասկանալը հայ ազգին ամենամահաբան է, որ ամեն հայ բարեխղճութեամբ տայ իր ձայնը նոր կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, երբ բոլոր Եւրօպայի մամուլը, աշխարհի ամենամեծ թերթերը, քաղաքագէտները և նոյն իսկ հայ հասարակութիւնը բարեւ է իր բոլոր ուշադրութիւնը Արարատեան կաթողիկոսութեան վրա, ինչով է զբաղված հայ մամուլը: Վեր առէք ինչո՞ւ, այս տարվայ «Մշակի» բոլոր համարները, և այլն: (Մեղու № 13): Նոյն համարում գտնում ենք և այսպիսի տեղ: «Ոչ պակաս զայրոյթ բարձրացնելով «Մշակը» իր բռնած վարմունքով զէպի կաթողիկոսի մահը (խօսք քաղաքագիտութեան վրա չէ): ոչ մի բառ, ոչ մի խօսք, թէ ինչ նշանակութիւն ունի կաթողիկոսը և կաթողիկոսութիւնը այսօր հայ ազգի համար: Երբ նրա համար է, որ կրօնական թերթ չէ: Բայց միթէ կրօնական թերթեր են Եւրօպայի թերթերը, որոնք կաթողիկոսութեան հարցին բազմաթիւ յօդուածներ են ներկայացնում: Իսկ «Արծաղանք» չարախաղներով աւելի էլ կոչող կերպով է վերաբերվում զէպի «Մշակը» մեղադրելով մեզ ատուութեան մէջ զէպի կ'աթողիկոսութիւնը: Ահա «Արծաղանքի» № 7-ի մէջ տպված խօսքերը: «Մեղու» և ամենայն հայոց կաթողիկոսը, որ կէս դարուց անկէ գործել է աղաքային աստղութիւն, հայրապետական ամբողջ միտքով թափուր, բարձրանում են մահվան և կեանքի չափ նշանակութիւն ունեցող խնդիրներ և մեր միակ աւելին ուրիշ «Մշակ» լրագիրը գլխում է մի էջ, մի յօդուած անգամ նուիրել այդ ընդհանուր-աղաքային հարցերին: Ինչով կարող ենք բացատրել այդ երևույթը, եթէ ոչ չարախաղութեամբ կամ որ նոյն է ատուութեամբ: Ուրիշ կարգապահութիւնը հակառակ կը լինէր և լոգիկային և ճշմարտութեան: Այդ ծանր և անարդար մեղադրանքը մեզ զմ մենք գտնում ենք «Արծաղանքի» № 7 մէջ, Ս. Պետերբուրգից գրված մի ինչ որ Զաքարիանցի նամակում: Երբեք այդ նամակն էլ սպորդէ է պ. խմբագիր, Արգար Յովհաննիսեանի աչքից, եթէ ոչ նա չէր թող տայ այդ տեսակ մեղադրանք իր լրագրում: Եւ «Արծաղանք» ու «Մեղու» դեռ յետոյ յանդիմանութիւն կուենան մեզ քաղաքական և բացատրելու թէ ինչ բան է մամուլի ազնիւութիւնը: Մենք «Արծաղանքի» և «Մեղու» հարցերին կը պատասխանենք միայն հետեւեալը: Մենք չենք գրում կաթողիկոսական հարցի վրա նոյն պատճառով, որով «Մեղու» ու

Ուսումնական խորհուրդը քննութեան ձևով զարկու և Ալիաղանի ալ միամտաբար դնաց: Պէտք էր ըսել որ այդ խորհուրդը անդամաց մեծամասնութիւնը արդէն անձնական հակառակութիւն ունէին Ալիաղանի զմ: Գնտնութեան միջոցին ընչ կը մնայ Պէտքերեան պ. Ուէթէս և Ալիաղանի կրօնական վարմունքին դիմար խորհուրդ: Եթէ ձեռքով չեն ընկեր, խօսքով լինեն: Ալիաղանի կը լուսայ Պէտքերեանը, ապ ալ անոր չը ինչո՞ւ: Լիբը, առաջակ, ամբարշտ, բաղադրողը ամենապարզ կը զարգարէ ամբաստանաւոր: Լաւ եթէ որ ամբաստանաւոր դատաւորի զմ մարտնչին, սակայն ներքին է գտաւորը մը այս ընթացքը ունենալ: Իսկ կուտան պատճառալ կ'ալ շատ կատակերգական է: Ահա ինչպէս որ մեզի պատմեցին: Ուսումնական խորհուրդը անգամ, մասնաւորապէս Պէտքերեանը, դիտողութիւն կընեն, երբ թէ Ալիաղանի իր տարած աշակերտներուն ուսումնական միջակին ուշադրութիւն չէ բերել: Ալիաղանի ալ կը պատասխանէ թէ՛ զէպի պ. Պէտքերեան պատկառանք ունենալու է լուս կենսաւոր չափ: Եթէ ևս մեղաւոր եմ, կըսէ, որ քու դպրոցից մէջ գրաւաչաւ սորվող սղան տեղեկութիւն չունի չորս գործողութիւններէն: Միթէ ևս մեղաւոր եմ, որ աղաքային հուշակած քու դպրոցից աշակերտը չը գիտէր բրիտանական վարդապետութեան տարերքներն:

Այս պատասխաններուն վրայ է որ Պէտքերեան կը ըսնի և տեղի կուենայ բերանացի մենամարտութեան տեսարանը: Կրթական խորհուրդը պէտք էր սա երկու հարցով զբաղվ թէ՛ Ալիաղանի արտօնութիւն ունէր տղայը Լիւթիանի տանու: Ինչպէս վարդապետ ալ տղոց հետ: Այս կեանքուն վրայ գոհացուցիչ քննութիւն մը չեն կատարած: Որքնադատ անձնքը շատ կը քննադատանայ այդ տեղեկագիրը, ձգնէր որ այս գործը գտաւորական ժողովը գործէ: Պ. Ալիաղանի արտօնութիւն ունէր աշակերտներ

«Արծաղանք» այդ հարցի վրա չեն գրում: Երբ որ նրանք կը գրեն, մենք էլ կը գրենք:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կօրէյեան կայսրի մանիֆէստը: «Temps» լրագ. հաղորդում է Կօրէյեան կայսրի մանիֆէստի բնագիրը, որով նա դիմել է իր ժողովրդին: Այդ դիմումնաւոր ցոյց է տալիս այն խորը յեղափոխութիւնը, որ ներկայ բուսկում կատարվում է այդ երկրում: «Կօրէյա», 1876 թ. վարմանը, բարեկամական համաձայնութիւն կայացաւ Կօրէյի և Նապոլիոնի մէջ. Կօրէյան երեք նաւահանգիստներ բացեց վերջինի համար, իսկ այժմ մենք դաշն կապեցինք Ամերիկայի, Անգլիայի և Գերմանիայի հետ: Այդ, ի հարկէ, նորմալութիւններ են, և ոչինչ զարմանալի չէ, եթէ իմ ժողովրդի մի մասը ստիպական կը մնայ դրանց: Բայց մեր օրերում միջազգային յարաբերութիւնները ամեն տեղ տիրապետում են, և բոլորովին վտանգաւոր չէ ընկերութիւնների կազմը, որոնք հիմնվում են իրաւունքի և փոխադարձ հաւատարմութեան սկզբունքներով: Օտարազգի հիւպատոսների ներկայութիւնը երկրում նպատակ ունի պաշտպանել վաճառականների շահերը, հովանաւորել իրանց հայրենակիցներին, որոնք առևտրով են պարագայում այս տեղերում: Այդուհի կասկածի ոչինչ հիմք չը կայ: Բայց մենք ունենք դեռ ևս շատ յիմար ուսանողներ և տղետ ուսումնականներ, որոնք կարծում են, որպէս ինչ ժամանակներում էր, թէ աղբը կը կորչի, եթէ նա յարաբերութիւններ կուենան մի ուրիշ աղբի հետ. նրանց խօսքերով, Նապոլիոն առաւելագու պէս պէտք է խուսափի արտաքին յարաբերութիւններից: Ինչպէս այդ մարդիկ չեն հասկանում, որ եթէ մենք վտակը կընենք օտարազգիներին, որոնք բարեկամութեան բաւերով են ներկայանում մեզ, այն ժամանակ ամբողջ աշխարհը կը բացականչի. «Ինչ վայրենի երկիր է այդ Կօրէյան»: Եթէ մի որ և է պետութիւն առանց դաշնակիցների կը մնայ, այն ժամանակ ուրիշ բոլոր պետութիւնները միմեանց մէջ դաշն կը կապեն, նրա վրա յարձակվելու, յաղթելու և աւերելու համար: Այլ բան է, եթէ մեղաւորից իրաւունք են պահանջում դալ մեզ օտո, նոր կրօն քարոզելու համար մեր երկրներում: Այդպիսի իրաւունք չէ կարելի տալ: Գուցէ, որ վաղուց

դաւանում է. Կօնֆուցիոսի և Մենցիի վարդապետութիւնը, դուք, որ ձեր ամբողջ կեանքում ճանարտութեան և արդարութեան հետեւը էք, կը վստահանաք արդեօք թողնել այդ բոլորը: Արդեօք դուք օտար դաւանութեան աշակերտներ կը դառնաք: Ի հարկէ, ոչ: Եթէ օտար աղբիներ կրօնական վարդապետութիւնը իսկապէս զգացողական վարդապետութիւն է, այն ժամանակ պէտք է հեռացնել նրան, բայց եթէ նրանց մեքենայականութեան դիտողութիւնը օգտակար է մեզ համար, աշխատենք օգուտ քաղել նրանց մեր բարոյութիւնը դարգացնելու համար: Թող ուսումնասիրենք նրանց գիւղատնտեսութիւնը, լոճկական դիտողութիւնները, զինուորական արտաւոր, նաւաշինութիւնը, բայց հերքենք նրանց կրօնական վարդապետութիւնները: Ուրեմն, եթէ այսուհետ դուք կը տեսնէք օտարազգիներին ինչպիսի բաց նաւահանգիստներում, ուշադրութիւն միջ դարձնի այդ բանի վրա, միջ վերաւորի օտարականներին: Այժմ, երբ արեւմտեան աղբերի հետ բարեկամական յարաբերութիւններ են հաստատվում, ևս հրաժարում եմ հեռացնել բոլոր քաղաքացիները, որոնք արդեւում էին օտարազգիներ աղաւ շարժողութիւնը մեր ճանապարհներով: չազգայնութիւն դարձրէք, դուք բոլորը, գիտնականներ և անգրագէտներ: Այդ նոր կարգերը սահմանում է աշխուսից իմ կառավարութիւնը, և այն անհիմնաբար պէտք է կախվի իմ թաղապետութեան մէջ ամեն նշանաւոր տեղի վրա:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆՍՍՍԹԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՅՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Ռուսաւորւթ լճից զին վրա արժէ 24¹/₃₂ պէն ուսաց 100 բուրջ Գերմանիայի վրա 20¹/₃₂ մարի, փաթեղի վրա 253¹/₄ Փրանկ: Ոսկի արժէ 8 լուր 18 կոպէկ: Ներքին առաջը 5% փոխառութեան տոմսի վրա 220¹/₃₂ լուր: Երկրորդը 216 լուր:


Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրվարի: Էդուգ փայ համար նշանակված է Բարձրագոյն որ լաւագու պալատական հրապարակի վրա Զօրախաղին կը մասնակցեն 43¹/₈ բառային

«Մեղու» և բոլոր մեղաւորները պիտի սկսէին բարձրագու աղաքային արձակ Մենք չէինք ըսել պիտի գոչէին, որ «Մշակ» աղբի և եկեղեցու թընամի է: Նայեցէ, թուրքալային տղայներ եկան, ատուք Լիւթիանի պիտի կը թուեն, վերջ թուրքա պիտի տարածվին և Լիւթիանայ աղբից ցովութիւնը դարացնելու պիտի աշխատեն, հաստարիմ արքանական պիտի ըլլան: Զայտ տեսնելը «Մշակ» իր թղթն կը թափէ, ուրեմն պէտք անպատճառ ընդունել ատուք: Նորեր ալ բեր տալ: Կեցցէ Ալիաղանի, անմահ բարեբար թուրքից հայոց:—Արդ «Մշակ» աղաքայ չընելու «Մեղու» ալ հակառակ ընթացք լուսեց:—Վերջապէս եթէ Ալիաղանին խօսքերուն նայաւ մեք կերտներ չեն ընդունում:—Մենք պատասխանեցինք թէ՛ մեր խելքը ատանկ նրբութեանց ատուք և մենք հոս քաղաքականութիւն ընել պաշտուն չունինք:

Պիտի հարցնէք թէ ինչու համար Պէտքերեան ճնողներն մին ինքը չըրաւ հարցնելու թէ արդեօք Ալիաղանի արտօնութիւն ունէր թէ ոչ: Ասող պատասխան չը կայ: Ալիաղանի կըսէր թէ արտօնութիւն ունի և ձեռքն ալ միշտ դրապան էր արտօնագիր ցոյց տալու համար: Ատուքներ կան որ մարդկանց պարզմտութիւնը անբացատրելի է: Երբ Ռոսանիկ Տէր-Մարգարեան ինքզինքն իր խոսք վստակութեան ցոյց տալով Բարդի դաւանութիւնը կողմնակի, գաղափարների ժամանակ կը հարցնեն գոհարաւաճաններուն թէ՛ ամեն բան աղէկ, Ռոսանիկ խաբարը մ'է, բայց դուք ինչ ըսելով ձեր գոհարները, ոսկիները անոր կուտայիք:—Բայց, կը պատասխանէին գոհարաւաճանները, ինքն կըսէր թէ ինչու է:—

—Այլ դուք իր ըսածին ինչպէս հաւատացիք կը կրկնէր գաղափարներ նախադարձ:— Ինչպէս հաւատացինք, կը պատասխանէին հրէայ վաճառականները, բայց ինչպէս չը հաւա

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.



1-3